

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ  
ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Սույն օրենքը տարածվում է այն կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաեւ պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չեն ներկայացրել որեւէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր (այսուհետ՝ հաշվետվություն) եւ չունեն հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ կամ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չեն վերագրանցվել, չունեն գույք եւ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ:

### Հոդված 2.

1. Սույն օրենքի 1-ին հոդվածում նշված հարկ վճարողների լուծարման (պետական հաշվառումից հանման) գործընթացը կատարվում է հետեւյալ կերպ.

Հարկային մարմինը մինչեւ 2011 թվականի հուլիսի 15-ը սույն հոդվածում նշված հարկ վճարողների ցանկը եւ հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների բացակայության մասին տեղեկանքը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ պետական ռեգիստր): Հարկային մարմինը սույն մասում նշված ժամկետում պետական ռեգիստր է ներկայացնում նաեւ հարկային մարմնում հաշվառված այն կազմակերպությունների ցանկը, որոնց հիմնադիր կազմակերպությունները լուծարված են:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ցանկերը պետք է պարունակեն կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում անուն եւ ազգանունը), հարկային մարմնին հայտնի կամ պետական ռեգիստրում նշված՝ կազմակերպության գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ բնակության հասցեն), հարկ վճարողի հաշվառման համարը:

3. Պետական ռեգիստրը հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված ցանկերը ստանալուց հետո մինչեւ 2011 թվականի սեպտեմբերի 15-ը ուղարկում է ծանուցում պետական ռեգիստրում կազմակերպությունների գտնվելու վայրի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրի կամ պետական ռեգիստրին հայտնի կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ հասցեով: Ծանուցումը համարվում է պատշաճ տրված, եթե այն հանձնվել է կազմակերպության ներկայացուցչին կամ անհատ ձեռնարկատիրոջը կամ վերջինիս ներկայացուցչին: Եթե սույն մասում նշված հասցեներում կազմակերպության ներկայացուցչին կամ անհատ ձեռնարկատիրոջը հնարավոր չի լինում գտնել, ապա պետական ռեգիստրը ծանուցումը ուղարկում է «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում» հրապարակման, որը եւս համարվում է պատշաճ տրված ծանուցում՝ տեղեկագրի հրապարակման օրվանից: Ծանուցումները հանձնվելու կարգը

սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը: Սույն մասում նշված ցանկերը պետական ռեզիստորը հրապարակում է նաեւ իր պաշտոնական ինտերնետային կայքում եւ 3000-ից ավելի տպաքանակ ունեցող մամուլում:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ցանկերը պետական ռեզիստորի կողմից սահմանված կարգով հրապարակվելուց հետո երկու ամսվա ընթացքում դրանում ընդգրկված հարկ վճարողների պատասխանատու պաշտոնատար անձինք (տնօրեն, կառավարիչ եւ այլն) պարտավոր են պետական ռեզիստոր ներկայացնել տեղեկանք՝ ֆիզիկական անձանց, կազմակերպությունների, հիմնարկների եւ պետական կառավարման մարմինների նկատմամբ ստանձնած պարտավորությունների եւ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի մասին: Սույն մասում նշված ժամկետում պարտավորությունների եւ գույքի վերաբերյալ տեղեկանք չներկայացնելու դեպքում համարվում է, որ տվյալ հարկ վճարողը պարտավորություն եւ գույք չունի, իսկ կազմակերպության գործունեության դադարեցումից կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից հանելուց հետո նրանց անվամբ հայտնաբերված գույքի հետ կապված խնդիրները լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն մասում նշված ժամկետում հարկ վճարողները կարող են պետական ռեզիստոր ներկայացնել գործունեությունը վերսկսելու կամ վերագրանցվելու մասին հայտարարություն, որի ներկայացման դեպքում պետական ռեզիստորը տվյալ հարկ վճարողին հանում է սույն հոդվածի 1-ին մասում նշված ցանկերից: Սույն մասով սահմանված ժամկետում տվյալ հարկ վճարողները, ինչպես նաեւ նրանց պարտատերերը կամ այլ պետական կառավարման մարմինները կարող են պետական ռեզիստոր ներկայացնել առարկություններ: Սույն մասում սահմանված ժամկետում տեղեկանքի կամ առարկության բացակայության դեպքում պետական ռեզիստորը երեք ամսվա ընթացքում գրանցում է կազմակերպության գործունեության դադարեցում կամ հանում է անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից:

5. Եթե սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետում պետական ռեզիստորի կողմից սահմանված կարգով հրապարակված ցանկերում ընդգրկված հարկ վճարողների պարտատերերից ստացվում է առարկություն, ապա պետական ռեզիստորը պարտավոր է օրենքով սահմանված կարգով մեկամսյա ժամկետում հայց ներկայացնել դատարան տվյալ կազմակերպության լուծարման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից հանման վերաբերյալ:

Հոդված 3. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառումից հանման կամ կազմակերպությունների լուծարման դեպքում մեկ ամսվա ընթացքում պետական ռեզիստորը տեղեկատվություն է տրամադրում հարկային մարմնին՝ հարկ վճարողին հարկային հաշվառումից հանելու նպատակով:

Հոդված 4. Սույն օրենքով սահմանված կարգով եւ հիմքով լուծարման ենթակա կազմակերպությունների եւ պետական հաշվառումից հանելու ենթակա անհատ ձեռնարկատերերի նկատմամբ հարկային հաշվետվություն չներկայացնելու համար վարչական վարույթ չի հարուցվում, իսկ հարուցված վարչական վարույթները ենթակա են կարճման:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի համար հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» եւ «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու եւ անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

| Առաջարկության հեղինակը                                                                                                                                                                                | Առաջարկության բովանդակությունը                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     | Եզրակացություն                                                                                            | Կատարված փոփոխությունները                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1                                                                                                                                                                                                     | 2                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | 3                                                                                                         | 4                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
| «Կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ. |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                                                                                                           |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
| Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ս. Նիկոյան                                                                                                                                         | Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածում «հաստատագրված վճարի» բառերից հետո ավելացնել «պետական տուրքի» բառերը:                                                                                                                                                                                                                                                                                                                          | Ընդունվել է:                                                                                              | Նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է համապատասխան լրացում:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |
| Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հ. Մարգարյան                                                                                                                                       | Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«Այն հարկ վճարողները, որոնք սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին սահմանված ժամանակացույցով փաստացի մարել են ունեցած հարկային ապառքները եւ սկսել են մարել հարկային օրենսդրությամբ հաշվարկված տույժերը եւ տուգանքները, սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից անմիջապես կազատվեն տույժեր եւ տուգանքներ վճարելու պարտավորությունից:»: | Առաջարկությունն ընդունելի է, սակայն առաջարկվող խմբագրությունը Կառավարության կողմից փոքր-ինչ վերանայվել է: | Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ պարբերություն:<br>«Այն հարկ վճարողները, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ փաստացի վճարել են 2009 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող եւ (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով առաջացած՝ սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված հարկային եւ այլ պարտադիր վճարների գծով ապառքները, սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ազատվում են այդ ապառքների գծով հաշվարկված եւ չվճարված տույժերը եւ տուգանքները վճարելու պարտավորությունից:»: |
| Հայաստանի Հանրապետության կառավարություն                                                                                                                                                               | Առաջարկվում է նախագծի վերնագրում «կողմից» բառը փոխարինել «համար» բառով, իսկ «պարտադիր սոցիալական ապահովության վճարների» բառերը՝ «այլ պարտադիր վճարների» բառերով:                                                                                                                                                                                                                                                                   | Ընդունվել է:                                                                                              | Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |                                                                                                                                                                                                                                                                                      |                     |                                                            |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------|------------------------------------------------------------|
|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | <p>Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հ. Մարգարյանի կողմից ներկայացված առաջարկությամբ նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում լրացված նոր՝ 3-րդ պարբերության կապակցությամբ առաջարկվում է համարժեք փոփոխություններ կատարել նաեւ նախագծի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ հոդվածներում:</p> | <p>Ընդունվել է:</p> | <p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> |
| <p>«2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու եւ անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից դիտողություններ եւ առաջարկություններ չեն ներկայացվել:</p> |                                                                                                                                                                                                                                                                                      |                     |                                                            |